

Ե Ա Յ Ի Ա Գ Ո Ա Խ Ն Ե Ր Ե Կ Ա Ր Ա Բ Ա

Ո՞ւր էք շտապում, ով խարուած ջրեր,
Մեզ ծարաւ բռղած, ո՞ւր էք շտապում.
Սեւանն է ժաշում ծով կարօտը ձեր,
Դուք ո՞ւր էք օտար ծովերը քափում:

Անուշ է քւում ձեզ կանչող հեռուն,
Բայց դուք կը կորչէք ծովերում օտար,
Դարձէք՝ ծովանայ բող հայոց առուն,
Միքէ՛ մեր զիրկը նեղ է ձեզ համար . . .

Ախ, մի՞քէ նեղ է, որ դուքս էք փախչում,
Բայց դուք կը կորչէք ծովերում օտար,
Զեր կոյր կորուստով իմ յոյսն է կորչւմ.
Դառնում սովասոյզ մի ջաղացքար:

Իմ պանդուխտ ջրեր, զուր էք շտապում,
Դարձէք, տուն վազէք, մեր մուրազ ջրեր,
Ինչո՞ւ էք օտար կնոջ զիրկ քափում
Հայ կոյսի բաժին կեանին ու գանձը ձեր:

Մայրենի լեզուն ինչպէ՞ս կարկաչի,
Երբ որ չխօսի հայն հայոց լեզունվ,
Երբ աղքիւրի պէս, ծովերում կորչի,
Էլ ո՞վ մեզ կտայ Մասիսդ, էլ ո՞վ . . .

Էլ ո՞ւր էք փախչում խելազար ջրեր,
Մեր մի բուռ հողն էլ ծով ծարաւ բռղած,
Դարձէք . . . Սեւանը ձեզ է պատկանում,
Թէկուզ հայրենի մի խեղն ջրադաց:

Դաւանան ջրեր, ո՞ւր էք շտապում,
Միքէ կարօ՞ւն են ովկիանները ձեզ,—
Դարձէք . . . Սեւանը ձեզ է պատկանում,
Կանչում Սահարա անապատի պէս:

. . . Էլ ո՞վ մեր հայոց լեզունվ մոնչայ,
Դարձէք, որ Արաքսն հայերէն հոսի,
Տուն դարձէք Հայեր, որ հողն էլ տուն գայ,
Մասիսն էլ նորէն հայերէն խօսի:

ՅՈՎՃԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ